

Խորմեան Հայրիկ կը ներկայանայ հոս իր անհատական, ընկերական, ընտանի և կամ թէ ըսենք՝ իր ժողովրդական կեանքի գիմագծերով և անցուղարձերով։ Որովհետեւ վաղի Առաջնորդութեան օրերուն չունէր այլեւս երբեմնի իր պատրիարքական Աթոռին դիւանագիտական կենցաղին ու խօսեւեղեալին սեղմութիւնը, որոնք իր պարզ բնութեան ու լեզուին հետ ամենեւին չէին հաշտուեր. մինչ հոս՝ իր Բոյնիկ մէջ կ'ապրի իր ժողովուրդի գաւակներուն հետ, բանութներուն ու թաղականներուն հետ, իր գործունէութեան յոգնութիւններէն վերջ իր սթափումը կը փնտռէ ընտանի այցելութիւններու և օրուան զուարթ անցուղարձերուն մէջ։

Ամփոփուած են Հայրիկի պատրիարքութեան վերջին երկու տարիներուն համառօտ անցքերը, իր հրաժարումը (1873), վաղի առաջին Սահմանադրապետ Առաջնորդ սահմանափակումը, և կրկին անկէ տխուր մեկնումը, այն է, 1871էն մինչեւ 1885ի ժամանակամիջոցը։

«Պողոս-Ապողոսի, այլ խօսքով հինի և նորի պայքարը», սովոր, օրուան, շուկայի դէպքեր, ընտրապայքարներ, զուարթ միջադէպեր, վերջապէս Հայրիկի կեանքի ուրախ երեսներուն հետ նաեւ անոր տխուր կողմերը, այս ամէնը պատմուած են ընտանեկան խօսուած լեզուով. մանրամասնութիւններ որ հաւանօրէն հանրութեան մեծամասնութեան անծանօթ են։

Բեմի վրայ կը դրուին Խորմեան Հայրիկի քաղաքական բաժնին մէջ մէկ քանի արժանիքներ, բայց բոլորին մէջ մասնաւորապէս Հայրիկի ժողովրդական պատկերացումն է որ երեւան կու գայ և իր հայրիկի սիրտին հետ իր զուարթ գիմագծերը աչքի կը զարնեն. «Հայրիկ բեմին վրայ։ Այնտեղէն ան հոգեկան հաղորդակցութեան մէջ է իր հօտին հետ. կը յուզէ, կը յուզուի, կու շայ, կը շայնէ» (17)։

Հայրիկի «տխուր հոգին ուրախութեան ծաւալուն ունէր», այնպէս որ րոպէապէս կը փոխուին իր տրամադրութիւնները և ամէն ինչ «քահ, քահ»ով կը վերջանայ։ Մտազբազումներէն վերջ զուարթութիւն կը փնտռէ, և զուարթ միջադէպեր չեն պակսիր Հայրիկի համար, որ չեղած պահուն յարմարօրէն կը ստեղծէ. օր. թուրք պաշտօնեաներու հետ, երբ ձախ միջադէպերու առեւտրէն իրմէ հաշիւ պահանջելու կու գան. կամ «Համով-Հոտով» հեղինակին՝ Սրտանձտեան վ.ին հետ, որուն անկողնէն կանուխ ելլելու իբր դեղագիր կը յանձնարարէր պատարագ ըսել. կամ երբ թաղական տխուր ժողովները իր մէկ ա-

նակնկալով զուարթ կը վերջանան։ Սիրտ ու հոգի եղած իր ժողովուրդին, կը զգար թէպէտք էր զուարթացնել անոր տրամադրութիւնները, զայն հոգեպէս բարձրացնելու համար։ Օր մը կ'առաջարկուի Հայրիկին ներկայ գտնուիլ «Ուսեալ Պանդուխտը» կտորին. «Ուսեալ Պանդուխտը, կը պատասխանէ Հայրիկ, լացնող խաղ մըն է։ Այս ժողովուրդը շատ է լացեր։ Եկէք քիչ մըն ալ խնդացուցէք»։ ասոր վրայ կը ներկայացնեն «Կիկոն-Մրտօն»։

Մէկին օրհնութիւն բաժնած առեն, չիմոռնար միւսին ժպիտ մը, ուրիշին կատակ մը։

Վերջին գլուխներուն մէջ, միայն չկրցանք հասկնալ թէ քանիերորդներն էին անոնք վերանագրէն գառ ուրիշ նշան մը չըլլալուն համար, Արծիւը հրաժեշտ կու տայ իր սիրելի Բոյնիկ. Հայրիկ կ'անցնի վաղի ճամբաներէն և տխուրէն կը յիշէ իր սիրելի Վարազը, դպրոցը, մինչ անդին խումբը կ'երգէ,

«Հայրիկ, Հայրիկ, ըկդ աւետիք
Վասպուրական մեր աշխարհ»։

Եւ երբ ողջերթի ուղերձին հետ վերադարձ կը մղովեն, «Արծիւին թեւերը կոտրած են, կ'ըսէ, ան այլեւս չի կրնար մինչեւ Մասեաց կատարը բարձրանալ»։

Հոս կ'իջնէ վարագոյրը. ասկէ անդին կան ուրիշ երեք գլուխներ, բայց անոնք այլեւս զըլխաւոր տեսարանին շուրջ կը դառնան։

Եթէ ուզէինք միւս տեսակէտներուն շուրջ կարծիք յայտնել, միայն պիտի ըսէինք, թէ յաճախակի կը հանդիպինք օտար բուերու և ասեւակերպերու. «Թեքնիք, բլան, ժուռնալ, ժանտարմ, ժիլէ, բրօթօքօլ, պիւտճէ, իւֆօր, բիէս» եւայլն, կամ «անկողնոյ ծառայել» նման բացատրութիւններ։ Հայերէն «երթացող, կախաւ կայած գատաստան, մարդկայնութիւն» բառերն ալ խորթ կու գան ականջին։

Այս բոլորին հետ մենք կը գնահատենք ախորժելի և գաւառի շունչով այս հատորը և կը խնդակցինք պատուական Հեղինակին, որ մոռացութեան ենթակայ իր յիշողութիւնները կրցած է փրկել թաղումի վտանգէն և տեւականութիւն ու հաղորդականութիւն տալ անոնց։

Անշուշտ դեռ սրբան կան այսպիսի օգտակար յիշողութիւններ, մանաւանդ անոնց քով որ տեսած են մեր շտեմած հին օրերը, որոնք կրնան կեանք ստանալ գրիչով և անցած յիշատակներ փոխանցել նոր Աերունդին։

Հ. ԵՍՍՅՈՒ ԳՌՈՒԶԵԱՆ

ՍԻՄԵՈՆ ԴՊՐԻ ԼԵՀԱՅԻՈՅ ՈՒԴԵԳՐՈՒԹԻՒՆ ՏԱՐԵԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆՔՆԵՐ — Ուսումնասիրեց և հրատարակեց Հ. Ակինեան — Վիեննա, 1936, թղթակազմ, ութածալ, էջք ԽԳ 49Է, մէկ պատկերով, գին Գ. Ֆր. 4:

Հին Հայերէն ուղեգրական մատենագրութիւնը մեր մօտ չէ մշակուած, հազուագիւտ են նիւթեր այդ մասին։ Եւ այդ հազուագիւտներուն մէջ գլուխ գործոց է Սիմէոն Դպրի ուղեգրութիւնը։ Հ. Ակինեան մեզի կու տայ անոր խնամեալ հրատարակութիւնը մեծ նպաստ մը բերելով մեր մատենագրութեան։

Յառաջաբանին մէջ կ'ըսուի որ հրատարակիչը 1932ին Յունիսին Լվով (Լեհաստան) գտնուելուն Հին Համալսարանի Մատենադարանին ձեռագրաց մէջ կը հանդիպի այս ուղեգրութեան թ. 58 ձեռագրին, որ նախ Հանդէս Ամսօրեայի մէջ, յետոյ ալ առանձին կը հրատարակէ, արտատպութեան մէջ ընելով սրբագրութիւններ և յաւելումներ։

Ներածութեան մէջ հրատարակիչը կ'ընէ կենսագրականը Սիմէոն Դպրի Զամոսցացի կամ Լեհացիի, որուն ծնողքը բնիկ կաֆայի՝ 1580ական թիւերուն կը գաղթեն կաֆայէն Զամոսցա։ Սիմէոնի հայրը՝ Մարտիրոս (մահտեսի), մայրը՝ Դովլաթ խաթուն։ Ինք ծնած է 1584ին, և իր առաջին ուսուցիչը Յակոբ Թոխաթեցի տաղասացը։

Վաղուց ուսումնասէր, գրամուլ, գրահաւաք, Սիմէոն նոր ուսման ծարաւով 1607ին արդէն ուղեւորութեան գաւազանը ձեռք կ'առնէ, այդ թուականին անցնելով նախ Լվով ուրկէ կը սկսի իր երկարատեւ թափառումները։ Այս ուղեւորութիւնները ան մանրամասնօրէն գրած է իր Ուղեգրութեան մէջ՝ որ հատորիս էջ 1-384ը կը գրաւեն։ Լեզուն համարձակ, ուսմաբարբառ, հաճելի, դիւրաւ հասկնալի։ Սիմէոն օժտուած է տեսնալու, դատելու կարողութեամբ մը՝ որ նոյն իսկ օտար շատ մը ուղեգրաց մօտ կը պակսի։ Իր ուղեգրութեան ընթերցումը իրապէս հետաքրքրական է, և բազմաթիւ կարեւոր տեղեկութիւններով ընդելուզեալ, տեղեկութիւններ իր մասին, ժամանակին դէպքերուն մասին, անձերու մասին, այնքան որ ուղեգրութեան չափ տարեգրութիւն մըն ալ կ'ըլլայ, մեր միջնադարեան պատմիչներուն կարգին շահելով արժէքաւոր դիրք մը։

Սիմէոնի մահուան թուականը եւ տեղը անյայտ կը մնայ մեզի։ Ներածութեան մէջ կենսագրու-

թիւնը մինչեւ 1636 Դեկ. 15 հասցուցած է Հ. Ակինեան, որ ասկէ վերջ կ'աւելցնէ. «Այս տեղ կը կորսնցնենք Սիմէոն Դպրի կենդանութեան հետքերը»։ (էջ ԼԵ)։

Էջ 387ով Հ. Ակինեան կու տայ յաւելուածը՝ որ թուով 10 յիշատակարաններ ի մի կ'ամփոփուին։

Յարգելի բարեկամս՝ Ս. Տէր Աւետիսեանի Նոր Զուգայի ձեռագրաց ցուցակին շնորհիւ ծանօթ էի եղած այդ հաւաքման Սիմէոնի գրչութեամբ կամ յիշատակարաններով ձեռագրաց։ Սակայն կ'երեւի որ այդ ցուցակը անբաւարար է, որովհետեւ հոն չեն տրուիր բոլոր այն ձեռագրները որոնց մէջ Սիմէոն յիշատակարան ունի։ Ուստի այս գրախօսականին առիթն օգտուելով Բազմալէպի էջերով կ'ամբողջացնեմ Հ. Ակինեանի կիսատ թողուցած գործը։

Սիմէոն Դպիր Լեհացիի Յիշատակարանով ձեռագիրը՝ նոր Զուգայի ամենափրկիչ վանքին մատենադարանը։

Թիւ 127, քղբեայ, նոտրգիր, երկուսն, կաշեկազմ, հետաքրքրական պարունակութեամբ Ոսկեփորիկ։ Յիշատակարան։

«Արդ ի թվին Հայոց մեծաց. ՌՁ (1631) և Յունվարի ԻԸ (28) ի հայրապետութեան Հայոց մեծաց. սբ. Էջմիածնայ, տեառն տէր Մովսէս ընտրեալ և սրբաճնեալ կաթողիկոսի և երկրորդ Լուսաւորչի։ Այլ և քաջ պվեալիկոսի, տիեզերաւոյս րաբունապետի. որ լուսափայլ բանին իւրով և յորդառատ քարոզին, ոչ միայն զքաղաքս կամ զչենս այլեւ զանապատս և զգաւոս հանդերձ անտառօք ծաղկեցոյց և վայելչացոյց. իբրեւ զանապատն Եգիպտոսի, զարդարելով զազգս Հայոց, և պայծառացուցանելով ի փառս աստուծոյ ամեալ, զամէնեօն հրաւիրելով ի սէրն Քրիստոսի շինելով վանորայս և նորոգելով եկեղեցիս բազում և յոլով. ի յայրս և ի փապարս լիրանց հաստատեալ անխափան, ժամ և ժամաւ կարգութիւն կարգ և սահմանք, արար կուսակրօն ճգնաւորօք և սուրբ միանձնացելովք մաքուր կուսիք, եւ աստուածահաճոյ կրօնաւորօք, այլ և արար դպրատունս, և գրատունս առ ի վարժումն մանկանց որոցոց Սիւնի։ Եւ այլ բազում կարգաւորութիւնս արար սա ի սուրբ Էջմիածնին. և բոլոր Հայաստանս աշխարհիս Հայոց. բայց զրեցաւ գիրքս ի աշխարհս Լէհաց ի տիրախնամ և աստուածապահ քաղաքն ի Լէվ, ի թագաւորութեան Լեհաց նահանգին երրորդ Զիկ-

մունտին, ընդ հովանեաւ Ննջման Սբ. Աստուածածնին, և այլ բազմահաւաք սուրբ տնօրինականացն Քրիստոսի Աստուծոյ մերոյ: Զեռամբ անարժան և անարհեստ գրչիս Սիմէոն տիրացուիս ի դառն և անբարի ժամանակիս զոր այսմ ամի ազգս Հայոց էր ի մէջ վշտի. և մեծ նեղութեան, տառապանաց, վասն ծովացեալ մեղաց ի խնդրոյ մեծագգի և պատվական զարմի հեզահոգի և աստուածասէր երկիւղած առն աստուծոյ մեծատուն և անուանի հոգիսէր և գրասէր տանուէրն Զուղայեցի պարոն Ֆարուխն որ բազում սիրով և ըզմամբ սրտի և մեծափափազանօք, ետ գրել զայս ցանկալի գիրքս, որ կոչի ծաղկագիրք. զի բազում ինչ կա հաւաքեալ և ժողովեալ ի նմա. ի պատմագրաց և ի հարցմագրոց յոյժ գեղեցիկ և պիտանի և բազմաց գովելի, շահ և օգուտ Հայոց ազգի. գնեց զգիրքս ի հալալ յարդեանց և յարդար վաստակոցն վասն իւր հոգւոյն, և իւր ծնողացն. հօրն և մօրն: Եւ ամենայն զարմի և յարեան մերձաւորացն. կենդանեաց և հանգուցելոցն զի գնեց զսա ի զբաղումն և ի վայելումն անձին իւրոյ, և յիշատակ հոգոյ և յետ մնացիցն և զաւակացն իւրոց սիրասնունդ, զոր տէր Աստուած բարով վայելել տացէ նմա. և ընդ երկայն աւուրս ամէն եղեցի: Արդ ազաչեմ զձեզ. որք հանդիպիք կամ օրինակէք. յիշեցէք ի Քրիստոս բարի մտօք զվերոյ ասացեալ ստացող սորա Պրն. Ֆարուխն և զամենայն յարեան մերձաւորս և զիս զանարժան գծողս, և զիմ ծնողս: Բայց աղաչեմ զհանդիպողսդ չի մեղադրել զրոյս խոշորութեան և սղալանացն զի բազում վշտօք և հոգսով և խիստ տրտմութեամբ գրեցի և նօտրեցի զսաշտապով և և փութով միայն ի կատարն և վերջն հասանել ջանացի: Եւ որ ողորմածն է զթամ. զձեզ որ յիշէք և զմեզ որ յիշման արժանի առնէք և ուղիղ սրտիւ ողորմիս ասէք, կամ բերան մի Հայր մեր, առհասարակ ողորմեսցի Քրիստոս և յիշեսցէ իւր միւս անգամ զալստեան և օրն անբեկին, յորժամ ասէ եկայք արհեստալք հօր իմոյ ժառանկեցէք զանսպառ ուրախութիւնն և յաւիտեանական վայելչութիւն յորում փառք և գոհութիւն յաւիտեան ամէն »:

Թիւ 153 Հարցմանց գիրք, քղրեայ, նոտրգիր, կաշեպատ տախտակ կազմով: Յիշատակարան էջ 489ա:

« Փառք... Արդ եղեւ զրոցս զրաւ ցանկալի կտակիս. և ծաղկալի բուրաստանիս որ կոչի ինքն Հարցմանց Գիրք... ի թվին Հայկազան

Յաբեթական, մեծ տումարիս ՌՆԵ (1626)ին. մայիս ամսոյ Ժ. և ի կաթողիկոսութեան Հայոց մեծաց. Սուրբ Էջմիածնայ, տէր Մեթրիսեղեկին. Զոր յայտմ վայրկեան ժամանակիս. եկեալ. քնդաց երկիրն ի քաղաքն որ կոչի Լէվ. Յինանցն երկրորդում շաբաթին: Աշխարհամարտին (աշխարհամարտան) շաբաթն օրն էին ընդ և նմին միաբանք. որ էր նախ և առաջին շնորհալի և ցանկալի սրբազան հայրն տէր Աստուածատուր. Յաթողակալ Սուրբ Էջմիածնայ: Արհի. եպիսկոպոս. Նաեւ այլ Դ Եպիսկոպոսք և Բ կրօնաւորք զոր տէր Աստուած շնաւհաւոր անէ ամենայն քրիստոնէից: Եւ ի թագաւորութեան Լէհաց երկրին երկրդ Զիկմոնդին: Բայց ստացաւ զսայ. մեծաւ սիրով և շնոմեռանդ յօժար սրտիւ և փափազանօք հեզահոգին և բարեմիտ սրբակրօն քահանայն տէր Անդրիաս Արզուրումցին. ետ զսա գրել իւր անձին, և իւրոցն. ամէնէցուն: Զոր յետոյ տեսեալ զսայ բարեմիտ այրն Աստուծոյ խոճա Պաղտատարն ճուղեցին. մեծաւ հայցմամբ. և փափազանօք գնեց զսա ի տէր Անդրիասէն ի հալալ վաստակոցն. և արդար արդեանցն վասն իւր հոգւոյն հօրն իւր և իւր ծնողացն յԵսային և մօրն Հռեփսիմէին Զի կարգալով զսայ զուարճասցի հոգով. և մրամնով յորչափ կենդանի լիցի... յիշեցէք ի Քրիստոս բարի մտօք և ուղիղ, զվերոյ ասացեալ ստացող սորայ զխոճա Պաղտատարն. և զիւր ծնողսն, և զարեան մերձաւորս. զկենդանիս և զփոխեցեալն առ Քրիստոս և բերան մի ողորմիս ասացէք, նա և ինձ, անարժան գրչիս, Սիմոն. լոկ անուն իրիցուս. որ միայն անուամբ եմ կոչեցեալ. բայց զործովս հեռացեալ, և Քրիստոս որ առաւորն է ի տուրս բարեաց տացէ ձեզ յիշողացդ, և մեզ յիշելոցս. զիւր Սուրբ արքայութեան. և նմա փառք յաւիտեանս, ամէն »: (Կ'երեւի թէ Հ. Ակինեանի ծանօթ է եղած այս յիշատակարանը՝ որմէ պատահիկ մը զործածուած է իր Մովսէս Գ. Տաթևացի գործին 1636 էջ 52-53, ուր տրուած ծանօթութեան համաձայն առնուած է Տէր Ալեքսիսեանի ցուցակէն: Սակայն զարմանալի է որ հակառակ ասոր Հ. Ակինեան այդ յիշատակարանը չէ դրած յաւելուածին մէջ):

Թիւ 235, Ոսկեփորիկ, քղրեայ, նոտրգիր, քայքայեալ: Այս ձեռագրին մէջ առնուած է նաեւ շահեկան բժշկարան մը: Յիշատակարան էջ 354ա:

« Փառք համագոյ անբաժանելի և միասնական, սուրբ երրորդութեան և միաստուածուն

թեան հօր անսկզբնականի. որդւոյն միածնի. և հոգւոյն սրբոյ ելողի, էակցի և փառակցի. յաւիտեանս ամէն: — Արդ գրեցաւ գիրս ի թեւականիս Հայոց, ՌՆԼ (1629): Սեպտեմբերի ԺԵ օրն շաբաթ. ի աշխարս ըզագ: Ի տերախնամ և աստուածաշէն քաղաքս Լէվ կոչեցեալ ընդ հովանեաւ Ննջման սուրբ Աստուածածնին, մօրն հանուրց փրկչին, և ազատչի: Ի կաթողիկոսութեան, երիցս երանեալ ճգնազգեաց և սրբասնեալ, արի և քաջ հովապետին, սուրբ և ընտրեալ Տէր Մովսէսի, այլ և շնորհալի և տիեզերալոյս ըբոնապետի, և երկրորդ լուսաւորչի, որ յայտմ ամի նստաւ յաջորդ յաթոն սրբոյն Գրիգորի, կամոյն աստուծոյ և հաճութեամբ և ընտրութեամբ ամենայն Հայոց, եկեղեցականաց, և աշխարհականաց, և ի թագաւորութեան Լէհաց Զիկմոնդին, զոր և այսմ ամի մեռաւ Շահ Ապազն Պարսից, և կենդանութեան նստոյց զթոն իւր Շահ Սօֆի ժառանկ թագաւորութեան իւրոյ, զորդիսն ի բաց մերժեալ: Բայց գրեցաւ գիրքս այս գեղեցիկ և պիտանի, որ կոչի Ոսկեփորիկ, ծաղկաքաղ, բազում և ազգի ազգի շահաւէտ բանեօք լցեալ, որ թէ ով յօժար կամօք և սրտի մտօք ընթեցի յոլով շահեսցէ ի սմանէ, և մխիթարեցի, հոգով և մարմնով, և քաղցրասցեն քիմքն առաւել քան թէ մեղրով. ըստ մարգարէին Դաւթա որ ասէ, որպէս զի քաղցր են քիմս իմ բանք քո, վասն զմեղր բերանոյ իմո: Ի խաղրոյ բարեմիտ և հեզահոգի գրասէր և ընթեցող միշտ իմաստուն և հանճարեղ, առն աստուծոյ խոճայ Յոսիանէսն Զուղեցո. և ճարտար հմուտ հազիմ ընտիր բժշկին, որ բազում յղձիւ և փափազանօք ետ գրել զսայ. ի հալալ ընչիցն, և ի արդար վաստակոցն, ի վայելումն անձին իւրոյ, և յիշատակ հոգոյն տէր աստուած բարով վայելել տացէ նմա. և ընդ երկայն աւուրս ամէն եղեցի: Ով սուրբ ընթեցողք. երես անկեալ կաղաչեմ զհանդիպողսդ այս սուրբ կտակիս, և աստուածային բուրաստանիս, յորժամ կարգայք կամ օրինակէք, սխալանաց և խոշորութեան գրիս չի մեղադրէք: Զի խիստ թախձեալ անձամբ տրտում հոգով և տխուր սրտիւ գրեցի, ի նեղ և ի դառն վշտաշատ ժամանակի: Զի ամենայն կողմանց, և ամենայն ուստէք. պատեալ պաշարեալ էին զմեզ թշնամիք և չար տարապանօք. այլ և սովք. սրածութիւնք, սասանութիւնք և ազգի ազգի արհաւիրք և մահ տարաժամք: Զի յարեմտից կուսէ, անհաւատ ուրացողն որ կոչի Շվէտ. մեր յերկիրս մտեալ զմեծամեծ քաղաքս և ա-

նառիկ բերթս էառ գիւղս և ազարակս, և աւանս և յոյժ փարթամացաւ և աւերելով, ապականելով զերկիրս: Զի Դ ամ հրկիզէր յափշտակէր և ամայի դարձուցանէր. մինչ զի ոչ ոք եթող բնաւ շինութիւն մինչ զի մեծատունք և պարոնաք մուրացիք դարձան, և առաւել հարկապահանջութեան, ի սպառ կորեան. և ի սովոյ սատակեցան, և շնեցան: Այլ և հիւսիսային կողմանէ ազգ նետողաց զազիր և զարշելի պիղծ թաթարքն մտեալ աշխարհս մեր, բազում և անթիւ գօրօք, յոլով մնաս գործեցին, և շատ գերելով, սպանանելով, քանդելով, աւերելով զգիւղս, և քաղաքս և բազում կանայս և զկոյս աղջկունս պղծեալով, զքահանայս և զկրօնաւորս այլ և զհաւատաւորս գերի վարելով, վաճ ինձ, և այս ամենայն եկն ի վերայ մեր, վասն ծովացեալ մեղաց իմոց, զոր ես ցաւագին դիմօք աղիողորմ կսկծմամբ ականատես և ականջալուր եղեալ իրացս վշտանայի, յոգոց հանէի, լայի և հառաջէի, և զսաղմոսն ասէի, թէ Աստուած, ընդէր մոռացար զծողովուրդն և զերկրպագուսն քո, և թէ Աստուած մտին հեթանոսք ի ժառանգութեան քո պղծեցին զտաճար սուրբ քո: Մի երբէք ասիցէն հեթանոս թէ ուր է Աստուած նոցա և այլն: Վասն այն անյարմարութեան գրիս մի մեղադրէք, այլ յիշեցէք ի տէր լի և ուղիղ սրտիւ, մէկ Հայր մերիւ, կամ Աստուած ողորմի ասացէք վերոյ յիշեալ, ստացող սորա զպր. Յովանէսն, և զիւր ծնողսն, և զիս անարժան գրիս զՍիմոն զպիրս, և զծնողս իմ: Եւ որք յիշեն զմեզ բոլորով սրտիւ յիշեալ լիցին ի Քրիստոսէ: Աստուծոյ օրն ահագին, և ի դատաստանն վերջին, լսել տացէ. « քո եւն »: (Այս յիշատակարանը կրճատմամբ հրատարակած է Հ. Ակինեան այս յաւելուածին մէջ առնելով Տէր Ալեքսիսեանի ցուցակէն. տես էջ 397-399):

Թիւ 256, նոտրգիր, քղրեայ, միասնական, Գիրք Սողոմոնի և ԺԲ մարգարէք: Յիշատակարան էջ 134ա:

« Փառք համագոյ անբաժանելի...: Արդ ես տկարս յարհեստ գրչութեան և յետնեալս յամենայնի. հիւանդ գոլով կրկին մարտովս ըստ Պողոսի ապաւինեալ ի զօրութիւն հոգւոյն սրբոյ որ զօրացուցիչն է տկարաց. սկսայ շնորհօքն քրիստոսի զգիրս ցանկալի և բազմաց պիտանի. իբր զբուրաստան ծաղկօք լի անուշահամ և բերկրալի, որ կոչի առակ Սողոմոնի, այս է Ե գիրքն, և Բժն մարգարէքն ողորմութեամբն աստուծոյ յանգ ելեալ կատարեցի. ի վայելումն

և յիշատակ անջինջ բարեմիտ. հեզահոգի, քաղցր և հանդարտ կուսակրօն տէր Յակոբ արի և քաջ կրօնաւորին. որ մեծաւ փափագանօք և յօժար սրտիւ ետ գրել զսա ի հալալ արդեանցն, և յարգար վաստակոցն զոր տէր աստուած բարով վայելել տացէ և ընդ երկայն ատուրս ամէն: Բայց գրեցաւ գիրս թվին Ռկէ (1618) Յունիս ԺԹ (19) աւուր յամառնամտի. դուռն սուրբ. Նիկողայոս սքանչելագործի. որ կայ յԱտրանու դուռն ի քաղաքն կոստանդինուպօլիս ձեռամբ թէրավարժ գրչի Լէհցի Սիմէոն դպրի»:

«Արդ աղաչեմ գհանդիպողդ անմեղադիր լինել գրիս յանարամարութեան և սղալանաց. զի յօրինակին տէրն զընալու էր. վասն այն ի տվէ և ի գիշերի անձանձիր նստելով նօտրեցի զսա բազմամբ փութով և շտապով. այս է, զայս ԺԳ (14) տետրս, ի Ժ (10) օրն, աղաչեմ անմեղադիր լինել համարձակութեանս, և սրտի մտօք յիշման արժանիս համարել զստացող սորին վերոյ ասացեալ աստուածահաճոյ և սրբասէր Տէր Յակոբ յաբեղայն. և զծնօղսն, և զամենայն աւրեան մերձաւորս, և զիս զանարժան զծողս, և որք զմեզ յիշեն յիշեալք լիցին օրն աներեկին. ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ որ է արհնեալ յաւիտեանս ամէն: Հայր մեր որ յերկինս սբ. եղիցի»:

Ասկէ զատ սոյն ձեռագրին էջ 327բ կայ գրչէն քերեցող յիշատակարան մը:

«Արդ գրեցաւ խրատու բանքս ի նեղութեան ժամանակս որ ի քաղաքէ քաղաք շրջագայի, և ի բանդն քրդմնջէի խելքս ի գլուխս ոչ ունէի. և ես ի փախուստն որ առնէի և Բ (2) շաբաթ աւր մի աւելի մինչեւ գիրքս որ կատարեցի. ի դռնէն ի դուրս ոչ կոխեցի, և այս տանջանքս որ քաշեցի. մի թէ գէմ գայ դատաստանի, աւր մի քանի որ այլ կացի ապա աւուր մի կատարեցի, և իմ եղբայրք և սիրելիք յո(է)ր և Յակոբ եղբայր. մի ձանձրանար ոչ չարչարանքս. որ իմացար. անմեղադիր յուշ մնալու ձեռամբ սուտանուն Միքայէլ: Թվին Ռկթ (1620) Յու. նիսի Գ (3) օրն»:

(Սիմէոն Լեհացիի պատկանող յիշատակարանը հրատարակած է համառօտութեամբ Հ. Ա. կինեան, առնելով Տէր Աւետիսեանի ցուցակէն):

Գրախօսուած այս հատորին ետեւը Հ. Ա. կինեան մեծ աշխատութեամբ աւելցուցած է օտարամուտ բառերու բացատրան մը, ինչպէս նաեւ գործին ամենակարեւոր մասը՝ յատուկ անուանց ցանկը: Էջ 485-493 գերմաներէն համառօտադրութիւն մըն է նիւթին: Իսկ հատորը կը բաւկուի Սիմէոն դպրի իսկազրին արտատպութեամբ որուն բնատիպ ծառայած է Լվովի համալսարանի թիւ 58 ձեռագիրը որ նոյն իսկ Սիմէոնի ուղեգրութիւնն է: Հ. Ա. կինեանի այս գործը շատ կարեւոր է և մեծապէս գնահատելի:

Յ. ՔՐԻՍՏԵԱՆ

ԳԻՏԱԿԱՆ

Մ Ր Զ Ի Ի Ն Ն Ե Ր Ո Ւ Հ Ե Տ

Արեւոտ օր մը զիտա՞ծ էք մըջիւններու բոյն մը, ի՞նչ եռուղեռ կայ հոն, անդու աշխատանք, լուռ երթուղարձ, կարգ ու կանոն մը պիտի դարնէ անմիջապէս ձեր աչքին. ոմանք տան մաքրութեամբ կը ըզրաղին, ուրիշներ աւարով լի տուն կը դառնան եւ մի քանիներ ալ նոյն տան մուտքը կը պաշտպանեն. մարդկային ընկերական կատարեալ կեանքն է որ հոն կը տիրէ: Ռամիկը շատ ուղիղ կերպով բաժնած է թագուհի, զինուոր, եւ գործաւոր

մըջիւններ, զիտութիւնն ալ դայն կը հաստատէ:

Փրօֆ. Կէյթըլ մըջիւններու ներքին կեանքին եւ անոնց զանազան տեսակներուն վրայ խօսելով կ'ըսէ՝ զինուոր մըջիւնները գործաւոր մըջիւններէն կը զանազանութիւն իրենց խոշոր գլուխով եւ մեծկալ ժանիքներով. եւ թագուհիէն՝ իրենց փոքր եւ ցամքած սերմնարանով: Այս տեսութենէն վերջ, նա փորձերով ցոյց կ'ուզէ տալ թէ իրականին մէջ թէ՛ զինուոր եւ թէ՛ գոր-

ծաւոր մըջիւնները՝ էգ մըջիւններ են որ յայտնի կը տեսնուի նոյն իսկ իրենց գործառնութենէն, իրենց պաշտօնէն, ինչպէս է օրինակ, ձաղերը խնամելու դայեակի պաշտօնը:

Թագուհի մըջիւնի մը ձուարերութեամբ առաջ եկած զինուոր եւ գործաւոր մըջիւններու տեսակին շուրջ երկու կարծիք կայ. Ա. կարծիքին համեմատ զինուոր կամ գործաւոր մըջիւնի զանազանութիւնը ձուարէն կախում ունի. այսինքն է թագուհին եթէ զինուորի ձու ածէ՝ զինուոր մըջիւն կ'ունենանք, գործաւորի ձուէն՝ գործաւոր: Բ. կարծիքով՝ Մըջիւններու տեսակը եւ զանազանութիւնը ոչ թէ ձուէն այլ այդ ձուերէն ելած թրթուրներուն մատակարարուած սնունդէն կախում ունի: Այս երկու կարծիքներն ալ մասամբ միայն ուղիղ են: Դիտուած է որ երիտասարդ թագուհիի մը առաջին դրած ձուերէն, որոնք մէկ արուէ մը բեղմնաւորուած են՝ գործաւոր մըջիւններ կը ծնանին եւ ասոնք երկու շարաթուան կարճ կեանք մը կ'ունենան եւ կ'ըսուին « փոքր գործաւորներ» . այս առաջին ձուերէն կարելի չէ սովորական զինուոր կամ գործաւոր մըջիւններ ունենալ. ասիկա՝ առաջին կարծիքէն մաս մը կը հաստատէ:

Իսկ գալով երկրորդ կարծիքին, որ սնունդէն առաջ կը բերէ զինուոր եւ գործաւոր մըջիւններու զանազանութիւնը եւ տեսակը հետեւեալ հաւանական փորձերով կը հաստատուի ըստ Փրօֆ. Կէյթըլի:

Թագուհիի մը երկրորդ ձուարերութենէն՝ ուղած մըջիւննիս կրնանք առաջ բերել. զինուորը իր խոշոր գլխով միայն կը զանազանուի, որ է ըսել՝ քիչ մը աւելի աճում առած է քան գործաւորը, եւ դիտուած է թէ ա'յն մըջնարանին մէջ ուր առատ է սնունդը, հոն թիւով աւելի են զինուորները: Սակայն հոս չի լինար խնդիր. սնունդներու մէջ եւս զանազանութիւն կայ. թագուհին տարւոյն մէջ շատ անգամ ձուարերութիւն կ'ունենայ. այն ձուարերութիւնը որուն ժամանակ բընութեան մէջ հեղուկ չաքարեղէն չի գըտ-

նուիր ծաղիկներու չղոյութեան պատճառաւ, այդ եղանակին թրթուրները կը կերակրուին որդերով, մսեղէնով եւ կամ կարծր սնունդներով, սոյն թրթուրներէն ամբողջովին զինուորներ կ'ելլեն. մինչդեռ այն եղանակներուն մէջ՝ ուր ծաղիկներ կան, եւ քաղցր պտուղներ, որով առատ է չաքարեղէնը, այդ եղանակին հանդիպած թրթուրները գործաւոր կ'ըլլան:

Ի՞նչ է այս եղելութեան պատճառը: Գործաւոր մըջիւնները զանազան կերպերով կը կերակրեն իրենց թրթուրները. անոնք անոյշ հիւթը իրենց բերանը առնելով մէկ մէկ կաթիլ կը դնեն թրթուրներուն բերանը. ասով շատ թրթուրներ կը սնանին բայց քիչ սնունդ կ'առնեն. որով աճում չեն ունենար եւ չեն աճիր նաեւ իրենց գլուխն ու ժանիքները. ուստի այդ թրթուրներէն գործաւոր մըջիւններ առաջ կու գան: Մինչդեռ այն եղանակին ուր չաքարի հիւթ չկայ, դայեակ մըջիւնները որդու նման միջատիկներ կը դառնան, զորս առանց բաժնելու կը ձգեն թրթուրներուն առջեւ եւ անոնք առատութեամբ, երբեմն ժամերով կ'օգտուին այդ որսերէն եւ ասով շատ աճում կ'ունենան. որով այս թրթուրներն ալ զինուորներ կ'ըլլան:

Փրօֆ. Կէյթըլ այս կարծիքը փորձով մ'ալ հաստատել ուզեց: Նա մըջիւնի մը բոյնին առատ ճաղարի եւ գորտի արիւն մատակարարեց (—հեղուկ սնունդ, բայց մսեղէն) ուրիշ բոյնի մը առատ՝ չաքար-ջուրի մէջ թաթխուած հացի կտորներ (—կարծր սնունդ, բայց հեղուկ չաքարեղէն): Տասը ամիս սոյն փորձերը կրկնելով՝ նա տեսաւ որ այդ երկու բոյներուն մէջ գործաւոր մըջիւնները կը բազմանա-

1. Դիտելու է որ մեղուներն ալ ասոր նման երեւոյթ մը կ'ունենան իրենց ձուարերութեան մէջ. եթէ փեթակի մը մըջիւնները լաւ դիտենք, պիտի տեսնենք որ բոլորն ալ նոյն մեծութեամբ չեն, և այսօր գիտութիւնը շատ որոշ կը ցուցնէ, թէ խոշոր մըջիւններու մէջ դրուած ձուերը բոլորն ալ արու մեղուներ կ'ըլլան. ուրիշ մեղուներու մէջ տեղի է և հաւանօրէն սնունդի ալ (և ոչ թէ ձուի տեսակը) որ մեղուն արու կ'ընէ: Ասիկա մըջիւններու՝ սնունդէն ունեցած տեսակին զանազանութեան կարծիքը աւելի հաւանական կը դարձնէ: